Դպրոցի զարգացման ծրագրի կառուցվածքային սխեմա

Դպրոցի առաքելությունը

Դպրոցի գործունեությունը

Իրավիճակի վերլուծություն

Ուժեղ և թույլ տեղերը

Զարգացման ծրագրի նպատակների և խնդիրների սահմանումը

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը

Պատասխանատուները

Արդյունքների գնահատման չափանիշները

Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Վերահսկողության մեխանիզմները

Բովանդակություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան
2. Առաքելություն
3. Դպրոցի գործունեությունը
4. Իրավիճակի վերուծություն, ուժեղ և թույլ կողմեր, անելիքներ
5. Զարգացման ծրագրի նպատակների և խնդիրների սահմանումը
6. Կրթության որակի բարելավում
7. Ուսումնական միջավայր, նյութատեխնիկական բազայի հարստացում
8. Արտադասարանական գործունեության ակտիվացում
9. Մանկավարժական համակազմի որակական բարելավում
10. Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում
11. Դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործու
12. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գոր-ծողությունների և միջոցառումների ժամանակցույցը
13. Պատասխանատուները
14. ԴԶԾ-ի հիմնախնդիրները
15. Ռիսկերը
16. Արդյունքների գնահատման չափանիշները

10. ԴԶԾ-ի չափանիշներն ու վերահսկողության մեխանիզմները

1. I փուլ – հետազոտական-վերլուծական
2. II փուլ – փորձարարական-ներդրումային
3. III փուլ – վերստուգումներ, շտկումներ
4. IV փուլ – ծրագրի լիարժեք իրականացում

ՆԱԽԱԲԱՆ

<<Գյումրու N18 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի 2023-2028թթ. զար-գացման ծրագիրը մշակվել է ՀՀ <<Կրթության մասին օրենք>>, ՀՀ << Հանրակրթության մասին օրենք>> , ՀՀ օրենք << ՊՈԱԿ-ի մասին >> , ՀՀ օրենք << Երեխաների իրավունքների մասին օրենք>>, ՀՀ օրենք << Լեզվի մասին>> , Ուսումնական հաստատության կանոնադրություն կետերի իրավական հիմքերով և 22.09.2022թ. ԿԳՄՍ նախարարի N35-ն հրամանին համապատասխան՝ հաշվի առնելով մանկավար-ժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախըն-դիրները:

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաս-տատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է:

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանը, զարգացմանը և սերունդներին փոխանցմանը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:

Դպրոցի գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

Ժամանակակից գիտությունը և տեխնիկան զարգանում են մեծ արագությամբ՝ ներթափանցելով կյանքի կազմակերպման, հասարակական հարաբերությունների, գիտելիքների ձևավորման, գիտելիքների ձեռքբերման և փոխանցման ոլորտ: Այդ պատճառով հանրակրթության էական բարեփոխումը և աննախադեպ զարգացումըդառնում են անհրաժեշտ և անխուսափելի:

Պետության և ազգի անվտանգության ապահովման և հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Դպրոցում հոգևոր մշակույթի սաղմերն ամրապնդվում են ժողովրդի լինելիությամբ, բարգավաճմամբ և զարգացմամբ:

Որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին համալրվելու կարողությունը: Ուստի դպրոցի առաջընթացը պետք է լինի դինամիկ և ծրագրավորված, ժամանակի պահանջների համապատասխան և գիտության առաջընթացի արագությանն համընթաց:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմքում պետք է դրվի ազգային արժանապատվություն ունեցող հայ մարդու դաստիարա-կությունը, ով ճանաչում, ընդունում և հարգանքով է վերաբերվում իր և ուրիշ ժողովուրդներին, նրանց ստեղծած հոգևոր և մշակութային արժեքներին: Հաստատության լիարժեք

գործունեության համար պետք է նպաստել սովորողի մոտ մարդասիրական, ազգային, համա-մարդկային արժեքների ձևավորմանը, սերմանել արժանապատվություն, հայրենասիրություն, պատասխանատվություն, հանդուրժողականություն, զարգացնել բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը: Կարևոր է նաև ուսուցողական միջավայրը դարձնել անվտանգ, հիգիենիկ, հետաքրքիր, գեղագիտական:

Առաքելություն

Կրթությունը՝ մարդուն անհատ դարձնելու գործն է…

1. Ձևավորել բազմակողմանի զարգացած, սեփական ակունքներին հաղորդ և ապագայի պատասխանատվություն ստանձնող անհատ, ով կունենա հստակ արժեհամակարգ:

2. Աշակերտներին փոխանցել մեր ազգային արժեքները՝ հայրենասիրությունը, պայքարելու և երբեք չհանձնվելու ջիղը, ստեղծելու և արարելու կարողությունը, արժեքներ, որոնք կօգնեն մեր սաներին դառնալ հուսալի հենարան մեր հայրենիքի համար:

3. Մեր առաքելությունը կլինի սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումը, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը, նրան ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթությանը նախապատրաստելը:

4. Բարոյական բարձր արժեհամակարգ ունեցող անհատի ու լիարժեք քաղաքացու ձևավորման կարևորագույն օջախներից մեկը դպրոցն է: << Գյումրու N 18 միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ը հավատարիմ կմնա դպրոցի հիմնական առաքելությանը , ինչը կլինի մարդ կերտելը . «Ոչ միայն մարդ, ով կգիտենա քիմիա կամ ֆիզիկա առարկաները, այլ նաև մարդ, ով կունենա հստակ արժեհամակարգ»:

5. Մեր կարգախոսը կլինի . <<Կամ մենք աշակերտներին պատրաստում ենք քննությունների համար, կամ՝ կյանքի, մենք ընտրում ենք երկրորդը…>>

6. Եվ ի վերջո, յուրաքանչյուր աշակերտի ամեն օր պետք է ներարկել այն միտքը , որ կրթությունը ամենահզոր զենքն է, որը նա կարող է օգտագործել աշխարհը և սեփական կյանքը փոխելու համար:

7. Դպրոցի առաքելությունը առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ այն կրթության համակարգի բաղադրիչ մաս է՝ կոչված ապահովելու ինքնուրույն կյանքի համար շրջանավարտի պատրաստվածությունը, միաժամանակ հանդիսանալով միջանկյալ օղակ պարտադիր հիմնական և մասնագիտական կրթության միջև:

8. Միջնակարգ դպրոցում ուսուցման ընթացքում աշակերտներն ունենալով մասնագիտական կողմնորոշվածություն, միաժամանակ պետք է հնարավոր

ճկունություն ապահովի, որպեսզի սովորողներն իրենց հավակնությունների և նախասիրությունների փոփոխության, ինչպես նաև ուսուցման ընթացքի արդյունքներից ելնելով հնարավորություն ունենան վերակողմնորոշվելու: Նման ճկունություն ապահովելու նպատակով դպրոցում կրթության մասնագիտական շեշտվածությունը պետք է աճի աստիճանաբար՝ դասարանից դասարան:

ԱՅՍՊԻՍՈՎ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՊԱՀՈՎՎԵԼ.

- Սովորողների պատրաստվածությունը ինքնուրույն կյանք վարելու

- Իրենց հակումներին, ընդունակություններին, կարողություններին և նախասի-րություններին համապատասխան ունենան նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն:

1. Դպրոցի գործունեությունը

- ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու N 18 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ:
- Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Լազոյի 2
- Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է (վերջին փոփոխությունները) 04.06.2019 թվականին:
- Դպրոցն հիմնադրվել է 1948 թ. որպես միջնակարգ դպրոց, իսկ ներկա շենքում տեղակայվել է 2000 թվականից:
- Դպրոցն իրականացնում է հետևյալ կրթական ծրագրերը՝
  - Տարրական ընդհանուր – առաջին աստիճան-սովորում են 176 աշ.(250 աշ.տեղ)
  - Հիմնական ընդհանուր - երկրորդ աստիճան-սովորում են 177 աշ. (270 աշ.տեղ)
  - Միջնակարգ ընդհանուր- երրորդ աստիճան – սովորում են 76 աշ.(150 աշ.տեղ)
- Դպրոցի շենքը տիպային է, երկհարկ : Դպրոցն աշխատում է միահերթ:
- Այժմ դպրոցում սովորում են 429 աշակերտներ
- Դպրոցում աշխատում են 40 ուսուցիչներ:
- Ընդհանուր աշխատողների թիվը 56 ն է:
- Դասարանների թիվը՝19-ն է, դասասենյակների թիվը՝ 20:
- Դպրոցն ունի 1 լաբորատորիա, 1 համակարգչային սենյակ, հանդիսությունների դահլիճ, մարզադահլիճ, գրադարան, բուժկետ, արխիվ, խոհանոց, 6 սանհանգույց:
- Դասարանների միջին խտությունը՝ 21-22 աշակերտ:
- Ուսուցիչ աշակերտ հարաբերությունը 1/10 է:
- Դպրոցն աշխատում է հնգօրյա ռեժիմով:
- Դպրոցի էլեկտրոնային հասցեն է gyumri18@schools.am, gyumri18dproc@gmail.com
  - Դպրոցնուն ՖԲ էջ https://www.facebook.com/profile.php?id=100075797563767 և կայք https://gyumri18.schoolsite.am/

«Գյումրու N18 միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ

Դպրոցը հիմնադրվելէ 1948թ.-ին որպես միջնակարգ դպրոց:

2003թ. փետրվարի հինգից դպրոցը փոխելով կազմակերպաիրավական ձևը վերանվանվում է ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու N 18 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, հանդիսանալով ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու N 18 միջնակարգ դպրոց» հիմնարկի (վկայականի համարը՝ Բ-002080, գրանցման համարը՝ 29.0059) իրավահաջորդը:

Դպրոցի կանոնադրությունը վերահաստատվել է 05.02.2003 թվականին, վերջին խմբագրումը՝ 04.06.2019թ.

2003 թվականին դպրոցը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում:

Դպրոցն իրականացնում է
միջնակարգ ընդհանուր- երրորդ աստիճան
հիմնական ընդհանուր- երկրորդ աստիճան
տարրական ընդհանուր- առաջին աստիճան
կրթական ծրագրերը

Այժմ դպրոցում սովորում են 429 աշակերտներ:Դպրոցում աշխատում են 40 ուսուցիչներ :

Ընդհանուր աշխատողների թիվը 56-ն է:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ՔԱՆԱԿԸ

Տարրական- 250 աշ. տեղ

Հիմնական-270 աշ. տեղ

Միջնակարգ- 150 աշ. տեղ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Դպրոցը ստեղծվել է 1948 թվականին Նորավան թաղամասում՝ այդ թվերին հայրենիք ներգաղթած հայրենադարձների համար: 1988 թվականի Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո կառուցվեց դպրոցի նոր մասնաշենքը, որտեղ տեղափոխվեցին 2000 թվականին:
Գյումրու թիվ 18 դպրոցի տնօրինությունը և ողջ աշխատակազմը գիտակցում են իրենց դերն ու նշանակությունը մեր երկրի վաղվա օրվա շենացման և կայացման գործում: Դպրոցում ապահովվում է երեխաների բարձրորակ կրթությունը, կազմակերպվում գեղագիտական ռազմական և քրիստոնեական դաստիարակությանը նպաստող բազմատեսակ միջոցառումներ:
Դպրոցի շրջանավարտները այսօր գիտության և կրթության բնագավառի աշխատողներ են, սպորտի բնագավառում աչքի ընկած մարզիկներ, բանակին զինվորագրված ծառայողներ, արհեստների մեջ իրենց հետքը թողած մարդիկ, ովքեր միշտ էլ հպարտանում են իրենց դպրոցով, ստացած կրթությամբ և առանձնանում են հայեցի և քրիստոնեական դաստիարակությամբ: Ունեցել ենք աշակերտներ որոնք մասնակցել են միջազգային կոնֆերանսների՝ Կարլովիչ Լուսինեն և Մաթևոսյան Համբարձումը, որը հիմա Արմավիրի մարզպետն է: Ունեցել ենք աշակերտներ որոնք մասնակցել են ամերիկյան FLEX ծրագրին՝ հաղթել են և սովորել ԱՄՆ-ում: Հանրապետական օլիմպիադաներում բարձր արդյունքներ ենք ունեցել՝ II կարգի դիպլոմներ, գովասանագրեր: Դպրոցի անգլերեն լեզվի բազմավաստակ ուսուցչուհի Լիդա Խաչատրյանը մասնակցել է միջազգային բազմաթիվ կոնֆերանսների և սեմինարների: Նա 2002-2004թթ մասնակցել է TEA ծրագրին և շահել է համակարգիչներ, տպիչ և պատճենահանման սարքեր, գրքեր: 2012 թվականին 9-10-րդ դասարանցիները մասնակցել են Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպած <<Օլիմպիական գանձերի որոնում>> մրցույթին և գրավել են II տեղը:
Դպրոցը ակտիվորեն է մասնակցում երգի–պարի մրցույթ-փառատոններին, ասմունքի <<Այբ>> կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված մրցույթներին. մաթեմատիկայից՝ <<Կենգուրու>>, մայրենիից՝ <<Մեղու>>, ռուսերենից՝ <<Ռուսական արջուկ>>, ինչպես նաև երիտասարդական նվաճումների աշխատանքներին և բազմիցս արժանացել է պարգևների: Դպրոցը իր գոյության 70 և ավելի տարիների ընթացքում շատ ձեռքբերումներ է ունեցել: Անցնում է ժամանակը, անցնում են օրերը, սակայն շեն ու կանգուն է դպրոցը, կանգուն է իր սաներով, իր տված սերունդներով, գիտության և մշակույթի բնագավառներում թողած անջնջելի կնիքով:

2. Իրավիճակի վերլուծություն

Իրավիճակի վերլուծության նպատակով անցկացրել եմ ուսումնասիրություններ և հանդիպումներ, որի արդյունքում ստացել եմ մոտավոր պատկեր դպրոցի գործունեության, ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ:

Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը

1) Ուսումնական հաստատության շենքային պամանների վերլուծությունը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Դպրոցի տիպային շենքի առկայությունն է: Շենքը խնամված է, սեյսմակայուն է, պատուհանների մի մասը փոխարինված են նորերով: Ջեռուցումը լոկալ է, առկա է կաթսայատուն:Կա հանդիսությունների սրահ, որը վերանորոգված է և գտնվում է լավ վիճակում: Դպրոցն ունի նաև հարմարեցված և կահավորված ճաշարան: Դասասենյակները խնամված են: Առկա է բացօդյա սպորտհրապարակ:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

2000 թ. տվյալ շենքում դպրոցի տեղակայվելուց հետո շենքում ընդհանուր հիմնանորոգում չի եղել: Տանիքը որոշհատվածներում ունի վերանորոգման կարիք: Պատուհանների մի մասը անհրաժեշտէ փոխել, քանի որ մարզումխստաշունչ ձմեռներեն լինում ու այս պատուհանների պարագայում ջեռուցումը դառնում է պակաս արդյունավետ: Դպրոցում գործում է 6 սանհանգույց, որից 2-ը ունեն հրատապ նորոգման կարիք, ոչ մի սանհանգույց չունի հարմարեցում ԿԱՊԿՈՒ աշակերտների համար: Մարզադահլիճն ունի վերանորոգման կարիք: Դպրոցամերձ տարածքում չկա խաղահրապարակ, թարմացման կարիք ունի նաև մարզահրապարակը: Դասասենյակներն ունեն վերանորոգման կարիք, գույքը շատ հին է և անհրաժեշտ է թարմացնել: Դասասենյակներում ու դպրոցի մուտքին չկան ԿԱՊԿՈՒ սովորողների համար ոչ մի տեսակի հարմարեցում, նույնիսկ՝ թեքահարթակ: ՈՒսուցչանոցը շատ փոքր է, անհարմար ու ունի , առնվազն, կոսմետիկ նորոգման կարիք:Ուսուցիչները և բարձր դասարանի աշակերտները ցանկանում էին ունենալ բուֆետ:

ԻՄ ԱՆԵԼԻՔԸ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ

ՈՒսումնասիրել դպրոցի բյուջետային հնարավորությունները, խորհրդակցելով վարչատնտեսական համակարգողի հետ և լրացուցիչ միջոցներ գտնել այս շատ կարևոր խնդիրները լուծելու համար: Խնդիրները կլուծվեն ըստ առաջնահերթության, որպեսզի դպրոցում ստեղծվի հարմարավետ միջավայր ոչ

միայնաշակերտների , այլև աշխատակիցների ու կրթական գործընթացի մասնակից այլ անձանց համար: Այդ փորձը ես ունեմ, քանզի իմ նախորդ ղեկավարած դպրոցում , առանց բյուջեից մեկ դրամ անգամ ծախսելու կարողացանք կոսմետիկ վերանորոգել դպրոցի ողջ տարածքը, օգտագործելով դպրոցի աշխատակիցների, նախկին շրջանավարտների, ծնողների և տվյալ թաղամասի բնակիչների հնարավոր-ությունները: Հիմնել բուֆետ, որն ըստ ծնողների կնպաստի, որ աշակերտները դուրս չգան դպրոցից խնութներից սնունդ գնելու համար և առավել վերահսկելի կլինի թե ինչպիսի սնունդ կգնեն: Ըստ ուսուցիչների կօգնի իրենց ավելի երկար մնալ դպրոցում և ավելի հարմարավետ կազմակերպել օրը, աշակերները նույնպես այդ առաջակով հանդես եկան:

2) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Դպրոցում գործում է 1 լաբորատորիա բոլոր բնագիտական առարկաների համար, լաբորատոր սարքավորումներ առկա են: Առկա է նաև համակարգչային սենյակ, ինտերնետ կապով: Համակարգչային սենյակում առկա էին և՛ սեղանի համակարգիչներ, և՛ նոթբուքեր՝ լիցքավորող պահարանով:Մարզագույք կա, գործածվում է: Առկա են պրոյեկտոր, տպիչներ, տեսաձայնագրիչ և <<Արմաթ>> լաբորատորիա:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Սեղանի համակարգիչները չեն օգտագործվում բարոյապես և ֆիզիկապես հին լինելու պատճառով, միևնույն սենյակում էին տեղակայված <<Արմաթ>> լաբորատորիան և համակարգչային սենյակը, որտեղ սեղաններին ուղղակի շարված էին չգործող համակարգիչներ: Իսկ սովորողները ցանկանում էին օգտվել… Լաբորատոր գույքի մեծ մասը ծառայում է որպես դիդակտիկ պարագա, հին լինելու պատճառով, իսկ նյութեր ձեռք բերելը գրեթե անհնար է:

ԻՄ ԱՆԵԼԻՔԸ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ

Զանազան ծրագրերի միջոցով, իսկ հնարավորության դեպքում նաև բյուջեի հաշվին բարելավել դպրոցի նյութատեխնիկական բազան: Ըստ ԿԶՊԾ-ի 3.1.5-ի նոր չափորոշչին և կրթական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածությունը ապահովված դպրոցների մասնաբաժինը հասցված է 2023թ. -30 %, 2024թ.- 55%, 2026-2030թթ- 100% , մեր խնդիրը կլինի տեղ հասցնել մեր խնդիրը ԿԳՄՍ նախարարությանն ու մնացած ենթակառուցվածքներին, դպրոցին առաջնահերթության կարգով ներառելու համար, քանզի քիչ արդյունավետ կլինի ԲՏՃՄ առարկաների ուսուցումը կազմակերպել առանց համապատասխան

լաբորատորիաների: Իմ առաջնահերթ խնդիրներից կլինի նաև համակարգչային սենյակի և <<Արմաթ>> լաբորատորիայի առանձնացումը, կդիմենք լիազոր մարմնի օգնությանը հին գույքի և համակարգիչների դուրս գրման հարցով:Գործածության մեջ կդրվեն անհատական համակարգիչները, քանի որ դրանք իրականում նախատեսված են աշակերտների ուսումնական կարիքների համար: Չնայած դպրոցում գրադարան կար, սակայն այն հին մոդելի էր, իմ անելիքներից մեկը կլինի նաև գրադարանային ֆոնդի համալրումը, գրադարանային ռեսուրս կենտրոնի հիմնումը և հնարավորության սահմաններում բազայի թվայնացումը/նաև բարձր դասարանի աշակերտների օգնությամբ/:

3) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ և ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ



Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները հետևյալ ուղղություններով:

1. Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում:
2. Կրթության պետական կառավարման մարմնին, լիազորված մարմին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
3. Դպրոցի շենքի շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:
4. Շահույթի տնօրինման հիմնական ուղղությունների և համամասնությունների ճիշտ սահմանում:
5. Ճիշտ ֆինանսական պլանավորում, որը կնպաստի դպրոցի ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործմանը:
6. Ֆինանսական եռամսյակային հաշվետվությունների քննարկում, առաջարկությունների իրականացման համար միջոցների ներդրում:
7. Միջոցներ ձեռնարկել դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման համար:

Ծնողական խորհուրդի հետ համագործակցության բարելավում

Սովորողների կրթության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ձեռք բերել փոխադարձ վստահություն: Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում:

1. Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում:
2. Ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում:
3. Մասնակցել արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին:
4. Ամրապնդել ծնողական խորհրդի կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը:
5. Աջակցել ծնողական խորհուրդի աշխատանքի կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բնագավառում:
6. Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը:

7. Ծնողներին պետք է մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստաց-մանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների:
8. Ծնողներին ներգրավել իրենց երեխաների արտադպրոցական և արտադա-սարանական աշխատանքներին:
9. Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվու-թյուններ :
10. **Ծնողական խորհրդի հետ հանդիպման արդյունքում պարզվեց, որ.**
1. Ցանկություն կա խորացնել երեխաների կապը գրքերի, և ընդհանրապես, ընթերցանության հետ: Իսկ դրա համար անհրաժեշտ է գրադարան- ռեսուրս կենտրոն:
2. Կային հինգ կիլոմետրից ավել երթևեկող երեխաներ, ում բնակելի թաղամասում դպրոց չկա: Ծնողները խնդրեցին հետաքրքրվել փոխադրավարձի հարցերով:
3. Ծնողներն առաջարկեցին նար ուշադրություն դարձնել համակարգիչների բացակայության վրա, որը կխթաներ սովորողների ուսումնառության որակի առաջընթացը:
Իմ անելիքն այս հարցում- Ուսումնասիրել դպրոցի գրադարանային ֆոնդը և քայլեր ձեռնարկել եղածը թվայնացնելու, թարմացնելու ու սովորողների համար հետաքրքիր նյութերով հարուստ ռեսուրս կենտրոն հիմնել: Հետաքրքրվել սովորողների փոխադրավարձի հարցերով: Հնարավորինս համակարգչներ ձեռք բերել և՛ ուսուցչանոցում, և՛ գրադարանում աշխատելու համար: ինչպես նաև ունենալ համակարգչային դասասենյակ:

Աշակերտական խորհուրդի հետ համագործակցության բարելավում

Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք է մշտապես ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը: Նրանց մասնակից դարձնել դպրոցի շրջանակներում որոշումների կայացմանը, որպեսզի նրանք կարողանան ազատ արտահայտել իրենց կարծիքը :
1. Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի գործունեության արդյունավե-տությունը:
2. Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում:
3. Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ՝ աշակերտների ինքնավարության միջոցով:
4. Ինքնավարությունը պետք է արտահայտվի աշակերտների ինքնադրսևորմամբ, կարծիքի ազատ արտահայտմամբ:

5. Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունները:
6. Ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունք-ների պաշտպանությունը:
7. Աշակերտական ինքնավարության միջոցով ապահովել աշակերտների կրթությունը և ինքնակրթությունը, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը:
Աշակերտների հետ հանդիպման ընթացքում պարզեցի-
1. բարձր դասարանցիներն հետաքրքրված էի « Ջինիշյան հիմնադրամի» բանավեճի ակումբով, ցանկանում էին անդամակցել:
2. ցանկանում էին դպրոցում ունենալ գոնե մեկ էլեկտրոնային գրատախտակ:
3. Խնդրեցին աշխատանքներ տանել լաբորատորիաներ ու համակարգիչներ ունենալու ուղղությամբ:
4. Ցանկանում էին մասնակից դառնալ միջազգային ծրագրերի:
Իմա անելիքն այս ուղղությամբ- կապ հաստատել « Ջինիշյան հիմնադրամի» հետ և խնդրել, որ դպրոցը ներառեն բանավեճի ակումբում(այդ փորձը ես ունեմ իմ ղեկավարած դպրոցից, որ միշտ եղել է ակումբի ակտիվ ու լավագույն մասնակիցը): Իսկ էլ. գրատախտակի, համակարգիչների և լաբորատորիաների ձեռք բերման համար փնտրել ճանապարհներ ու միջոցներ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Ծնողական ու աշակերտական խորհրդների հանդիպման ժամանակ հասկացա, որ դպրոց ուժեղ կողմերից են այդ խորհրդակցական մարմինները: Երկու հանդիպումներին էլ ծնողական խորհուրդն հավաքվել էր մեկ մարդու նման, նրանք ոչ միայն իմ հարցերին պատասխանեցին, այլև լուրջ հարցադրումներ արեցին: Ակտիվ էր Նաև աշակերտական խորհուրդհանդիպումները տնական էին ու բովանդակալից:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Իմ հանդիպած խորհրդակցական մարմինների հետ անհրաժեշտ է աշխատանք տանել բարձր իրավագիտակցություն ձևավորելու համար: Անհրաժեշտ է կարևորել նրանց դերը, իրավունքներն ու պարտականությունները:

ԻՄ ԱՆԵԼԻՔԸ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական

միավորումներ, ծնողական, աշակերտական, խորհուրդներ: Իմ նախաձեռնությամբ կստեղծվի նաև հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդներ:

Դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ ևս: Դպրոցում խորհրդակցական մարմինների ակտիվ , համակարգված և նպատակային գործունեությունը նպաստում է դպրոցի գործունեության զարգացմանը, ժամանակակից պահանջների բավարարմանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությանը: Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը: Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություն-ներում՝պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Որպես դպրոցի տնօրեն՝ պետք է կարողանալ ճիշտ գնահատել և ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար: Սակայն այդ մարմինների գործունեության մասին հարցումներս հակասական էին:

Առաջնահերթության կարգով անհրաժեշտ է –ակտիվացնել խորհրդակցական մարմինների աշխատանքը, հնարավորությոան դեպքում առանձնացված սենյակ կամ սենյակի մաս հատկացնել **մեթոդական մասնախմբերին**, աշխատանքները (նիստերը, քննարկումները, գրավոր աշխատանքների կազմումն ու ստուգումը և այլն) կազմակերպելու համար: Ակտիվացնել **աշակերտական խորհրդի** աշխատանք-ները. տրամադրել տարածք, գրականություն, մեդիա միջոցներ նրանց ակտիվ կյանքը կազմակերպելու այլ միջոցներ: Օգնել, որ աշակերտական խորհուրդը դառնա անկախ, ինքնակառավարվող մարմին, քանի որ դպրոցը միջնակարգ է և ավագ դասարանների աշակերտների առկայությունը կարող է այդ ինքնավարությունը ավելի նպատակային և հզոր լինել: **Կառավարման խորհրդին** ավելի մոտ պահել դպրոցական կյանքին և մասնակիցը դարձնել համադպրոցական բոլոր միջոցառումներին: Մտադիր եմ նաև ստեղծել **շրջանավարտների խորհուրդ ,** քանի որ դպրոցը տարիներ շարունակ քաղաքին և հանրապետությանը տվելէ բազմաթիվ խելացի շրջանա-վարտներ , ովքեր փայլում են ոչ միայն գիտության բանագավառներում, այլ նաև հաջողված բիզնեսմեններ են: Նրանց հնարավարություններն օգտագործել ի շահ դպրոցի և ավելի սերտ դարձնել նրանց կապը դպրոցի հետ: Այս կապը և՛ նյութական , և՛ հոգեբանական լավ ներգործություն կունենա դպրոցական կյանքի վրա ու լավ օրինակ կծառայի սովորողների համար: ԵՎ հնարավոր եմ համարում նաև շրջանավարտներից ու ծնողներից կազմված **հոգաբարձուների խորհրդի** ինստիտուտի կայացումը դպրոցում:

4) ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ



ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Ուսուցման գործընթացի մասնակիցների պատրաստակամությունն է ցանկացած համագործակցության: Այդ մասին խոսեցին աշակերտական խորհրդիանդամները, ովքեր ցանկանում էին մասնակցել <<Բանավեճի ակումբ>>-ին: Դպրոցը շատ ակտիվ համագործակցում է թատրոնների, թանգարանների և այլ մշակութային կենտրոնների հետ:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Եթե սովորողներն են խոսում իմ հետ, ում տեսնում էին առաջին անգամ, նշանակում է ցանկություն կար, չկար ուղղորդող , օգնող կամ իրականացնող:

ԻՄ ԱՆԵԼԻՔԸ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ

Կհամագործակցենք կրթության կառավարման լիազոր մարմինների,ԿԶՆԱԿ-ի, <<Բանավեճի ակումբի>>, ՀՕՖ, <<Թումո>> կազմակերպությունների հետ համայնքապետարանի հետ՝ փորձելով մասնակցություն ցուցաբերել միջոցառումներին, քննարկել և լուծել նյութատեխնիկական, սանիտարահիգիենիկ և այլ կարևոր խնդիրներ՝ օրենքի շրջանակներում:

Դպրոցը կհամագործակցի է ԵՊՀ-ի, ՇՊՀ-ի, ՀԱՊՀ-ի ,ՀՊՏՀ-ի, Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի/ Русский центр науки и культуры/, Հայկական Կարիտաս-ի և մի շարք այլ հաստատությունների և կազմակերպությունների հետ:

Համագործակցությունը տարբեր կառույցների և կազմակերպությունների հետ կստեղծի հնարավորություն բազմաթիվ ծրագրերի մասնակցության և իրականացման, աշակերտների զարգացման և ակտիվ գործունեության, դպրոցի խնդիրների մասնակի լուծման, նյութատեխնիկական բազայի հարստացման, տարբեր ծրագրերի մասնակ-ցության և դպրոցի ակտիվ և նպատակային գործունեության:

Ստեղծել համագործակցություն (Համագործակցել)

1. Մարզային և քաղաքային իշխանությունների հետ
2. Հասարակական և մշակութային կազմակերպությունների հետ
3. Ֆրանսիայի դեսպանատան և Ֆրանսիայում հայ համայնքի հետ
4. Ջինիշյան հիշատակի հիմնադրամի հետ
5. Այլ ուսումնական հաստատությունների հետ
6. …

5) Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Դպրոցի մանկավարժական կոլեկտիվն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցից է կոլեկտիվի արհեստավարժությունն ու բարձր մասնագիտական գիտելիքները: Դպրոցում դասավանդում են կամավոր ատեստավորում անցած 2 ուսուցիչ (70%) և տարակարգ ունեցող 2 ուսուցիչ: Դպրոցը ուսումնա-դաստիարակչական հարցերում փորձում է ապահովել աշակերտակենտրոն մոտեցում: Դպրոցը ակտիվ մասնակցում է ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմա-կերպվող և անցկացվող բոլոր սեմինարներին և վերապատրաստումներին:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Քառասուն հոգանող մանակավարժական հանրույթում ընդամենը չորս ուսուցիչ ունեն տարակարգ կամ կամավոր ատեստավորված են:Դպրոցո ունի բոլոր հնարավորու-թյունները մենթոր դպրոց դառնալու համար: Ուսուցիչները ցանկություն չունեն տարակարգ ստանալու, խուսափումեն կամավոր ատեստավորումից և ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպվող <<Տարվա լավագույններ>> մրցույթին մասնակցելուց: Ուսուցիչները դեռևս չեն տիրապետում նոր ՀՊՉ-ինև նրանից բխող ծրագրային և մեթոդական փոփոխություններին:Թեև առարկաների դասավանդման համար ուսպլանի ժամաքանակները բավարար են առարկայի յուրացման համար, այնուամենայնիվ, սովորողները շարունակում են հաճախել կրկնուսույցի պարապմունքների:

ԻՄ ԱՆԵԼԻՔԸ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ

Կոլեկտիվը սկսվում է մարդկանց համախմբվածությունից, բայց ոչ թե մեխանիկական, այլ սոցիալ-հոգեբանական միասնությամբ, երբ մարդկանց այդ խումբը հասարակությանը կարող է տալ ավելին, քան նրանցից յուրաքանչյուրը՝ առանձին-առանձին: Կոլեկտիվի համախմբվածությունը բնութագրվում է նրանով, որ այն կարող է դիմակայել արտաքին ազդեցություններին և պահպանել ներքին միասնականությունը տարբեր պայմաններում : Դա նպաստում է դպրոցի գործունեության բոլոր կողմերի բարելավմանը, դաստիարակչական հնարավորությունների էական բարձրացմանը, ինչպես նաև նրա անդամների բարոյահոգեբանական միասնությանը, կազմակերպվածությանը: Կոլեկտիվի համախմբվածությունն արդյունավետ կառավարման հզոր լծակներից մեկն է: Դա խմբի ներքին ուժն է, որը պետք է ծառայեցնել կազմակերպության նպատակներն իրականացնելիս: Երբ դպրոցում առկա է համախմբված և աշխատող կոլեկտիվ, ուսումնադաստիարակչական աշխատանքները կլինեն արդյունավետ, դպրոցում բարոյահոգեբանական վիճակը կլինի կայուն և դպրոցը հեշտությամբ կկարողանա իրականացնել իր առաքելությունը:

Իմ գլխավոր նպատակներից մեկը կլինի մանկավարժական հանրույթի համախմբումը, համախմբում մեկ ընդհանուր նպատակի՝ աշակերտակենտրոն դպրոցի կայացման շուրջ, ում գլխավոր նպատակն ու առօրյայի կարևորագույն բաղադրիչը դպրոցն է , այն

պետք է լինի ընտանիքին համահավասար: Համաձայն ԿԶՊԾ-ի 1.2-ի պետք է նպաստել ուսուցիչներիմասնագիտական առաջխաղացման, ներառյալ ատեստավորման, հնարավորությունների ընդլայնում՝ փոխկապակցելովայն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների և մասնագիտական չափանիշների հետ-համագործակցելով ԿԳՄՄՆ-ի հետ մինչև 2028թ.-ը հավելավճար ստացող ուսուցիչներիմասնաբաժինը հասցնել 50%: Օգնել և նպաստել ուսուցչի մասնագիտական աճին:

6) ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ և ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ և ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

ՈՒԺԵՂ կողմեր

Դպրոցն ունի անհատական համակարգիչներ, համապատասխան մասնագետ առանձին և համակցված դասեր անցկացնելու համար:

Թույլ կողմեր

Հաշվի առնելով օր օրի զարգացող իրականությունը անհրաժեշտ է համալրել ՏՀՏ միջոցները, ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակներ, կազմակերպել ինտերակտիվ, համակցված և նորարական այլ լուծումներով ավելի արդյունավետ ու հետաքրքիր դասապրոցես: Հնարավորություն ստեղծել դպրոցում հեռավար կրթական ծառայությունների, էլեկրտոնային բաց պաշարների, առցանց դասընթացների կազմակերման համար, համաձայն ԿԶՊԾ-ի 2.3-ի:

ԻՄ ԱՆԵԼԻՔԸ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ

Ուսումնասիրել մանկավարժների մասնագիտական հնարավորությունները, ստեղծել հարմար աշխատանքային միջավայր ՏՀՏ-ների օգտագործմամբ, ստեղծել մուլտիմեդիա ձևաչափով հայրենագիտական, ճանաչողական, տեղեկատվական նյութեր և տարածել դրանք: Ի դեպ դա կարող է նաև լրացուցիչ արտաբյուջետային հնարավորություն ստեղծել դպրոցի համար:

7) Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Բոլոր մանկավարժներն ունեն համապատասխան մասնագիտական որակավորում և անցել են ու դեռ անցնում են ՀՊՉ վերապատրաստումներ: Աշակերտները բաց են ցանկացած նոր ծրագրեր իրականացնելու համար:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Աշակերտների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ սովորողների պահանջներն ու կրթական կարիքներն ավելի բավարարում են հումանիտար առարկաները: Աշակերտների պատկերացմամբ ավելի շատ ուշադրություն պիտի դարձվի ԲՏՃՄ առարկաների վրա:

ԻՄ ԱՆԵԼԻՔԸ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների ակտիվ և պատշաճ մակարդակը (բաց դասեր, միջոցառումներ, նախաձեռնություններ, դասղեկի բաց դասեր, քննարկումներ, բանավեճեր և այլն) դպրոցն ապահովում է աշակերտ-ուսուցիչ, ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունների կայունացմանը, նպաստում է աշակերտներին և ծնողներին դեպի դպրոց ձգողականության էլ ավելի ուժեղացմանը և նպաստում է աշակերտների ռազմահայրենասիրական, գեղագիտական, աշխատանքային, բնապահպանական, ինտելեկտուալ դաստիարակության զարգացմանը: ՀՊՉ-ի վերապատրաստումների առաջին փուլը գրեթե ավարտվել է: Այն իրականացվել է բարձր արդյունավետությամբ և Հանրապետության բոլոր մանկավարժները պատրաստ են իրենց սեպտեմբերն սկսել ՀՊՉ-ին համապատասխան: Քանի որ ես Գյումրու թիվ 18 դպրոցում իրականացվող կրթության գործընթացին ծանոթ չեմ, ապա անհրաժեշտ եմ համարում առաջին կիսամյակում ուսումնասիրել, ախտորոշել, բացահայտել դպրոցում իրականացվող կրթության որակը և համապատասխանությունը պետական կրթական և առարկայական չափորոշիչներին համապատասխանությունը:

Բացի նեղ առարկայական գիտելիքներ տալուց ապահովել երեխաների և ծնողների կապը դպրոցի հետ: Իսկ դրա իրականացման համար անհրաժեշտ է ակտիվացնել արտադասարանական կյանքը: Իմ ուսումնասիրությունների արդյունքում պարզեցի, որ ուսհաստատությունում շատ քիչ են (եթե չասենք չկան) բաց դասերը և միջոցառումները, որոնք կնպաստեն սովորողների ու դպրոցի ավելի սերտ կապին, արժեքային համակարգի, գեղարվեստական ճաշակի, խոսքի և այլ հմտությունների զարգացմանը: Կարծում եմ նաև ԿԶՊԾ-ով նախատեսված արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների ցանցի զարգացումն ու հասանելիության ապահովումը կնպաստեն կրթության որակի բարձրացմանը:Ներդրված են ավագ դասարաններում կրեդիտային համակարգը, ներառյալ սովորողների նախասիրությունները և կարողությունները խթանող արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների զարգացման, դպրոցի և կենտրոններիհամագործակցության միջոցով: Սրանով կլուծվի նաև սովորողների առաջ քաշած այն հարցը, որ դպրոցում պասիվ է արտադասարանական և արտադպրոցական կյանքը

:

8) ԲԱՁՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ և ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Աշակերտների առողջության պատշաճ պահպանումը ապահովելու ուղղությամբ մշտապես հատուկ ուշադրության կենտրոնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մարմնակրթության և ֆիզիկական դաստիարակության խնդիրները: Մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով համագործակցում են համայնքային բժշկական հաստատության հետ:Բացառում են անորակ սննդի մուտքը դպրոց: Քննարկումների և տարաբընույթ միջոցառումների միջոցով պարբերաբար անդրադառնում են վտանգավոր սովորություններին / ալկոհոլ, ծխախոտ, թմրանյութեր/, դարին բնորոշ խնդրահարույց հիվանդությունների /ՁԻԱՀ, սեռավարակներ և այլն/:

Թույլ կողմերը

Դպրոցում գրեթե բացակայում են ԿԱՊԿՈՒ հարմարեցումները, որ կնպաստի ԿԱՊԿՈՒ սովորողների ավելի արագ սոցիալականացմանը: Եթե աշակերտը հնարավորություն չունի հենց դպրոցի ներսում օգտվել համացանցից, կնշանակի նա դուրս է մնում վերահսկողությունից և կարող է հայտնվել անցանկալի տեղեկատվական տիրույթներում:

ԻՄ ԱՆԵԼԻՔԸ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ

Առաջնահերթ անհրաժեշտ է աշակերտների մեջ սերմանել ու զարգացնել կայուն արժեհամակարգ: Ձևավորել կարևորն անկարևորից տարբերելու, սեփական կարծիք ունենալու ու արտահայտելու կարողություն, սեփական արարքների համար պատասխանատվություն կրելու կարողություն, պարաստակամություն՝ աջակցելու, օգնելու դրա կարիքն ունեցողին, սեփականության, հոգատարության զգացում դեպի դպրոցը, ուսուցիչը, կրթությունը և դասընկերները, պատշաճ վերաբերմունք դեպի դասընկերները և համապատասխան հոգատարություն և վերաբերմունք դեպի ԿԱՊԿՈՒ սովորողները: Իմ հարցումների արդյունքում պարզեցի, որ չնայած 2019 թ.-ից

մարզում անցում է կատարվել է համընդհանուր ներառական կրթությանը, դպրոցում ներառական կրթության իրականացման համար կա միայն հոգեբան: Անհրաժեշտ է պատկառանք ունենան պետական խորհրդանիշների, մշակույթի հայրենիքի նկատմամբ:

Աշակերտական ինքնուրույնության ապահովում, աշակերտական խորհրդի ակտիվացման և համապատասխան տարածքի տրամադրման, այնպիսի միջավայրի ստեղծում, որը սովորողներին կտա ինքնուրույն դրսևորվելու հնարավորություն: Հայրենասիրական դաստիարակությունը հանրակրթության անբաժանելի մասն է: Ցանկացած սովորող դպրոցից պետք է դուրս գա իբրև քաղաքացի, ով գիտակցում է իր տեղն ու դերը պետության կայացման գործում, իսկ այդ գիտակցմանը մարդը հասնում է , երբ ծանոթանում է իր պատմությանը, գրականությանը, մշակույթին: Դառնում է դրա կրողը և հստակ գիտի ազգային արժեքների նպատակային պահպանման և տարածման անհրաժեշտության մասին: Սկսած տարրական դասարաններից՝ երեխան պիտի ծանոթ լինի ՀՀ դրոշին, զինանշանին, պետք է անգիր իմանա օրհներգը: Պետք է իմանա մեր երկրի պետականության կայացման գործում եկեղեցու և բանակի կարևորության մասին, պետք է տիրապետի հայոց լեզվին, իսկ արդեն դպրոցի ավագ օղակում աշխատի խոսել գրական հայերենով: Դպրոցը պետք է ձևավորի քաղաքացի, ով հարգանք և ակնածանք կդրսևորի սեփական ազգի, պետության նկատմամբ և կկարողանա հասարակական, պետական շահը գերադասել անձնական շահից:

Ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ կազմակերպել հանդիպումներ հերոսների հետ, կազմակերպել հայրենասիրական ֆիլմերի դիտումներ, ինչպես նաև այցելել զորամասեր և կազմակերպել միջոցառումներ:

Մենք ապրում ենք անցումային ժամանակաշրջանում, երբ վտանգը մեծ է կորցնելու հին արժեքները այն դեպքում, երբ նոր արժեքները դեռևս ճիշտ չեն ընկալվում: Այստեղ առաջանում են որոշակի դժվարություններ՝ կապված երիտասարդության արժեքային համակարգի ձևավորման և ճիշտ դաստիարակության հետ: Իսկապես վտանգ է առաջանում՝ կորցնելայն, ինչը հայկական է, ինչը ավանդական ո ւբարոյական է… ժողովրդի առջև կանգնում է ազգային դիմագիծը կորցնելու վտանգը:

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է , այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:

Ընդհանուր առմամբ արժեքային համակարգի ձևավորումը երեխաների մոտ, նպատակ ունի ձևավորել անձ և քաղաքացի, ով պետք է՝

1. Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:
2. Հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի

ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:
3. Գիտակցի, որ գիտությունը , արդիական տեխնոլոգիաները , կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում.
4. Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները , աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը.
5. Կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ.
6. Կարևորի գեղագիտական արժեքները , գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը.
7. Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ , լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք.
8. Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը.
9. Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ.
10 . Դրսևորի աշխատասիրություն , հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը.

9) ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ և ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր մեր հանրապետությունը թևակոխել է կրթության բովանդակային բարեփոխումների նոր փուլ: Փոփոխվել է նաև Հանրակրթության պետական չափորոշիչը /ՀՊՉ/, որը հիմնված է սովորողների հմտությունների և կարողունակությունների վրա: Կրթական քաղաքականությունը մեծացնում է ուսուցիչների պատասխանատվությունը: Այսօր ուսումնադաստիարակչական գործունեության կենտրոնական դեմքը՝ ուսուցիչը, կարիք ունի իր կարողունակությունները հարստացնելու, որպեսզի կարողանա սովորողի մոտ ձևավորել գիտելիք, հմտություն, դիրքորոշում և արժեքային համակարգ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Դպրոցը ուսումնադաստիարակչական հարցերում փորձում է ապահովել աշակերտակենտրոն մոտեցում: Բոլոր աշխատողներն ակտիվ մասնակցում է ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր սեմինարներինն վերապատրաստումներին:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Ուսուցիչները ցանկություն չունեն տարակարգ ստանալու, խուսափումեն կամավոր ատեստավորումից և ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպվող <<Տարվա լավագույններ>> մրցույթին մասնակցելուց։

Ուսուցիչները դեռևս լիարժեքորեն չեն տիրապետում նոր ՀՊՉ-ին և նրանից բխող ծրագրային և մեթոդական փոփոխություններին։Թեև առարկաների դասավանդման համար ուսպլանի ժամաքանակները բավարար են առարկայի յուրացման համար, այնուամենայնիվ, սովորողները շարունակում են հաճախել կրկնուսույցի պարապմունքների։ Չկա նաև ուսուցչի աշխատանքի համար հարմարեցված միջավայր։ Ուսուցիչը հենց դպրոցում պետք է աշխատի էլեկտրոնային մատյանների և կատարի իրեն վերապահված մնացած աշխատանքային պարտականությունները, որի համար չկան ո՛չ սնվելու հնարավորություն, ո՛չ համակարգիչներ, ո՛չ էլ հարմարավետ ու տեխնիկապես հագեցված ՈՒՍՈՒՑՉԱՏՈՒՆ…

ԻՄ ԱՆԵԼԻՔԸ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐՈՒՄ

Ամենաառաջնային խնդիրս պետք է լինի ՈՒՍՈՒՑՉԱՏԱՆ հիմնումը, որը պետք է լինի հարմարեցված,տեխնիկապես հագեցած հանգստի համար հարմար։ ԿԶՊԾ-ում՝ 1.2, նախատեսված է ուսուցիչների մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմների ներդրում, ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացման գործիքակազմի մշակում, իրականացում և կատարելագործում, այս ամենն իրականացնելու համար պետք է ուսուցիչներին հնարավորություն տրվի մասնագիտական առաջխաղացման,մշակել ու ներդնել արժանապատիվ վարձատրության մեխանիզմներ։Ավելի արդյունավետ աշխատող, իր աշխատանքային պարտականություններից դուրս աշխատանք կատարող ուսուցիչները պետք է պարգևատրվեն, ստանան արժանավայել աշխատավարձ և մոտիվացնեն մյուս աշխատողներին։ Ուսուցիչները չպետք է խուսափեն երկակի որակավորում ստանալուց, ակտիվ պիտի լինեն զանազան, ԿԳՄՍՆ-ի կողմից երաշխավորված, վերապատրաստումներում, դասագրքերի քննարկումների ու դասագրքաստեղծ խմբերում ընդգրկվելուց։Ուսուցիչների հետ աշխատանքում առավել շեշտադրել դասավանդման նոր մեթոդների կիրառումը, կրթվելու և ինքնակրթվելու ցանկության առկայությունը, շարունակաբար իրականացնել ուսուցիչների միջև համագործակցության մթնոլորտի կատարելագործմանը նպաստող գործողություններ, անընդհատ մոնիթորինգի ենթարկել դպրոցի տնօրենի տեղակալների կողմից դպրոցի մանկավարժների հետ տարվող անհատական աշխատանքների որակն ու սահմանված սկզբունքների համապատասխանությունը, մշտապես մոնիթորինգի

ենթարկել, վերլուծել և օբյեկտիվորեն գնահատել մեթոդական միավորումների աշխատանքները, փորձի փոխանակում պարբերաբար անցկացվող դասալսումների միջոցով, ցանկացած վերապատրաստումից, սեմինարից, կոնֆերանսից, դասընթացից հետո, դրան մասնակցած ուսուցիչը, անպայման մանկավարժական աշխատակազմին պետք է ներկայացնի իր իմացածը սեմինար քննարկումի միջոցով, մանկավարժների համար դպրոցում ստեղծել տեղեկատվության մի համակարգ, որըհնարավորություն կտա մշտապես համալրել գիտելիքները հետևյալ ուղղու-թյուններով՝

ա/դպրոցի և կրթության նկատմամբ նոր պահանջներ
բ/հոգեբանություն և մանկավարժություն
գ/ժամանակակից մանկավարժական նվաճումներ
դ/առաջավոր մանկավարժական փորձ

10) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ և ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Դպրոցի զարգացման ծրագիրը ենթադրում է որոշակի ֆինանսական ծախսեր:

Դպրոցի ֆինանսավորումը հիմնականում բավականացնում է աշխատավարձի, հարկերի, կոմունալ, գրենական, տնտեսական ծախսերի վճարմանը: Շատ հաճախ դպրոցի խնդիրները առաջանում են հենց ֆինանսական միջոցների պակասից: Ուստի անհրաժեշտ է ճիշտ կողմնորոշվել և կատարել իրատեսական պլանավորում, պետք է հստակ պատկերացնել իրականացման մեխանիզմները և հնարավորությունները: Նախահաշիվը կազմելիս անհրաժեշտ է ծախսերը ճիշտ պլանավորել, հավանություն ստանալ խորհրդի և հիմնադիրի կողմից:

Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներ կարող է հանդիսանալ ուսուցիչների պարտադիր վերապատրաստումը (իմ կողմից նախկինում ղեկավարած դպրոցը նախարարության կողմից երաշխավորվել էր որպես վերապատրաստող կենտրոն իմ գրած ու ներկայացրած մոդուլների շնորհիվ՝ 3 տարի ժամկետով՝ 2021-2023 թ.) և զանազան այլ մրցույթներ ու ծրագրեր, որոնք օրենքով և կանոնադրությամբ

հանդիսանում են դպրոցի, բյուջեից ֆինանսավորման, լրացուցիչ աղբյուրներ: Նախատեսվում է կազմակերպել նաև երկարօրյա ուսուցում և նախասիրական պարապմունքներ:

Դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման հնարավորությունները

Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրներից: Պետական բյուջեից ֆինանսավորումը կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից: Կարող է առաջանալ նաև արտաբյուջե, ձեռնարկատիրական գործունեության արդյունքում կամ մրցութային կարգով: ԿԶՊԾ-ով կներդրվի Հանրակրթական հաստատությունների ծախսարդյունավետ կառավարման և ֆինանսավորման մոդելները/նպ. 4/, որի արդյունքում կգործի կառավարման արդյունավետ համակարգ՝ ապահովելով մասնակցայնություն և հաշվետվողականություն: Ծախսարդյունավետ ֆինանսավորման մոդելի ներդրման արդյունքում ծախսի նպատակայնությունը կնպաստի կրթության որակի ապահովմանը: Բովանդակային և վարչատնտեսական կառավարման գործառույթների տարաբաժանման և առանձնացված իրականացան արդյունքում կատարված ծախսերի, ցուցանիշների և պլանավորման շեղումները կհասնեն նվազագույնի: Ըստ արդեն գործող ֆինանսավորման նոր մոդելի դպրոցները կֆինանսավորվեն դասարանների թվով և ԿԱՊԿՈՒ երեխաների նպատակային առավել արդյունավետ հաշվարկով: Սկսել է գործել նաև դպրոցների լրացուցիչ ֆինանսավորման մեխանիզմը, որը լրացուցիչ խթան կդառնա բարձր և ցածր կատարողական ցուցանիշներ ունեցող դպրոցների խրախուսման և զարգացման համար:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

	նպատակ	խնդիր	գործողություն

1.	Մանկավարժական համակազմի որակի բարելավում	Ուսուցիչների ինքնազարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում	1.Մեթոդմիավորումների հետ համատեղ կազմել ինքնազարգացման պլանի օրինակելի նմուշ 2. Կազմել ժամանակացույց՝ մ/մ ների կողմից մանկավարժների ինքնազարգացման աշխատանքների արդյունքում հետաքրքրա-շարժ ստեղծագործական աշխատանքները ներկայացնելու համար 3. Աջակցել մանկավարժներին՝ մշակելու և տպագրու-թյան ներկայացնելու իրենց մեթոդական աշխատանք-ները 4. Ուսուցիչներին ծանոթացնել նոր ՀՊՉ-ին և նրանից բխող ծրագրային և մեթոդական փոփոխություններին 5. Աջակցել <<Տարվա լավագույններ>> մրցույթին մասնակցելու համար 6. Նյութերով համալրել ռեսուրս-կենտրոնը, գրադարանը / մեթոդական ամսագրեր, պաստառներ, դիդակտիկ պարագաներ, էլ. կրթական նյութեր, առարկայական ծրագրերի CD-ներ/ 7. Շարունակաբար կազմակերպել դասընթացներ՝ ուսուցիչների համակարգչային գրագիտությունը բարելավելու համար
2.	Սովորողների կրթական կառուցվածքի և բովանդա-կության վերազինում	1. Սովորողների մոտ ձևավորել կարողու-նակությունների զարգացում 2. Սովորողների կրթական իրավուն-քի իրացումը ՀՊՉ-ին համապատասխան	.1. Սովորողների մոտ ձևավորել քննա-դատական մտածողություն, գիտելիքը գործնականում կիրառելու հմտություն: 2. Սովորողների մոտ զարգացնել. ա/ սովորել սովորելու կարողունակություն բ/թվային և մեդիա կարողունակություն գ/մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն դ/ սոցիալական կարողունակություն 3. Ուսուցման գործընթացին զուգահեռ ապա-հովել սովորողների մարդասիրական, մշա-կութային, քրիստոնեական, գեղագիտական,

		3. նորարական ծրագրե- րի իրականացում, մեթո- դական դիդակտիկ նյու- թերի ապահովում	ֆիզիկական կարողունակություն 4. Ելնելով անհրաժեշտությունից՝ կազմա- կերպել հեռավար ուսուցում 5. Պարբերաբար լաբորատոր աշխատանք- ների միջոցով խթանել հետաքրքրությունը բնագիտական առարկաների նկատմամբ 6. Ընթերցասրահը կահավորել ժամանակա- կից ստանդարտներին համապատասխան, որպեսզի առաջանա հետաքրքրություն ընթեր- ցանության նկատմամբ
3	Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ֆիզիկական միջավայրի և նյութատեխնիկական բազայի ապահովում	1.ԿԱՊԿՈՒ սովորողների համար ֆիզիկական հարմարեցում 2. Նյութատեխնիկական բազայի համալրում 3.Առարկայական կաբի- նետների ստեղծում	1. Տարբեր ծրագրերի օգնությամբ դպրոցի ներսում կառուցել թեքահարթակ, իսկ հնարավորության դեպքում վերելակ, որպեսզի ԿԱՊԿՈՒ սովորողների համար կազմակերպվեն դասեր դպրոցի 2-րդ և 3-րդ հարկերում նույնպես։ 2. Փորձել ստեղծել կամավոր ներդրողների միություն /ծնողներից, շրջանավարտներից, համայնքից/ թեքահարթակի և վերելակի կառուցման համար։ 3. Նորոգել և ձեռք բերել նոր սերնդի համակարգիչներ, պրոյեկտորներ։ Համալրել լինգաֆոնային դասասենյակը գույքով և տեխնիկայով։ Լաբորատորիաները պարբերաբար համալրել նյութերով։ 4. Գրադարանը պարբերաբար համալրել անհրաժեշտ գրականությամբ։
4.	Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացում	1. Կառավարման խորհրդի դերի բարձրա- ցումը դպրոցի հետ համագործակցության արդյունքում 2.Մանկավարժական խորհրդի լիազորութ- յունների գործնական կիրառում 3,Ծնողական խորհրդի հետ համագործակ- ցության բարելավում 4. Աշակերտական խոր- հրդի գործունեության ակտիվացում	Կառավարման և խորհրդակցական յուրաքանչյուր մարմնի հետ առանձին-առանձին քննարկել կատարած աշխատանքների հաշվե- տվությունը, կանոնադրությունը,հստակեցնել իրավունքներն ու պարտականությունները, կազմել տարեկան աշխատանքային պլանը և տարածք հատկացնել աշխատանքի և փաստաթղթերի պահպանման համար: Ուշադրության կենտրոնում պահել իրենց գործառույթների սահմաններում ընդունած որոշումներն ու դրանց ժամանակին կատարումը:

5.	Սովորողների սոցիալականացման ապահովում	1.Համագործակցել տարածքային կառավարման մարմինների և ՀԿ-ների հետ 2.Համագործակցել կրթական հաստատությունների հետ 3.Ձևավորել քաղաքացիական հասարակության ակտիվ քաղաքացի	1. Անցկացնել հանդիպում-ցերեկույթ արվեստագետների, արհեստագործ վարպետների, մշակութային գործիչների հետ: 2. Կազմակերպել այցելություններ մշակույթային կենտրոններ 3. Համագործակցել ԲՈՒՀ-երի հետ: 4. Կազմակերպել տարաբնույթ էքսկուրսիաներ Հայաստանի պատմամշակութային վայրեր, այցելություններ թանգարաններ, ցուցասրահներ, թատրոններ 5. Դաստիարակել կամավորության, առաջնորդության,մասնակցայնության արժեքներ կրող քաղաքացի
6.	Ունենալ դպրոցում ուսումնադաստիարակչական վիճակի մասին ամբողջական և համակողմանի տեղեկատվություն	1. Դպրոցի բոլոր պլանների նկատմամբ մշտական վերահսկողություն 2.Ուսուցիչների աշխատանքի վերահսկողություն 3.Սովորողների կողմից գիտելիքների յուրացման գործընթացի վերահսկո-ղություն	1.Վերահսկել հաճախումների հաշվառման, մատենավարության աշխատանքները ա/վերահսկել բոլոր տեակի պլանների պատշաճ և ժամանակին կատարումը՝ առարկայական մասնախմբերի աշխատանքային պլաններ, դասղեկների տարեկան աշխատանքային պլաններ, փոխտնօրենների տարեկան աշխատանքային պլաններ, մանկավարժական աշխատողների աշխատանքային պլաններ բ/հաստատել ու վերահսկել հերթապահության կարգը 2. Ծանոթանալ ուսուցչի մասնագիտական պարտականությունները նկարագրող փաստաթղթին, ուսումնական ծրագրերին. ա) դասավանդվող առարկայիարդյունքների մշտական վարահսկում բ) ուսուցիչների փորձի ուսումնասիրություն գ) առարկայական ծրագրերի կատարողականների մշտական վերահսկողություն դ) կատարել ուսուցիչներիաշխատանքի մշտադիտարկում 3. առանձին առարկաներից ձեռք բերված գիտելիքների արդյունքները ստուգելու նպատակով անցկացնել ստուգարքներ ա)ուսումնասիրել աշակերտների ընդգրկվածությունը ուսումնական պրոցեսում բ) ուսումնասիրել հոգեբանական մթնոլորտը դասարաններում գ) ուսումնասիրել աշակերտների և ուսուցիչների համագործակցությունը դ) ուսումնասիրել ուսման նկատմամբ վերաբերմունքը ե) վերահկողության ընթացքում հայտնաբերված խնդիրների լուծման համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Միջնակարգ դպրոցի , իմ մոդելի , գլխավոր նպատակն է հնարավորինս պակասեցնել « կրկնուսույցի դպրոց » հասկացությունը: Միջնակարգ դպրոցի ռազմավարությունն ու նպատակը կայանում է նրանում, որ երեխան ստանա իր նախասիրություններին ու պահանջներին համապատասխան կրթություն, առանց լրացուցիչ գումարներ ծախսելու: Միջնակարգ դպրոցի առավելությունը կայանում է հենց նրանում, որ յուրաքանչյուր դպրոց, ըստ իր նախասիրությունների ու պայմանների, կարող է ընտրել մի քանի հոսք և իրականացնել ավելի խորացված ուսուցում, ավելի շատ ժամաքանակով և այս դեպքում հնարավոր կլինի քիչ-քիչ մարել կրկնուսույցի ինստիտուտը: Այս ամենին է միտված նաև կրթական պետական նոր չափորոշիչը, որը հնարավորություն է տալիս դպրոցին բացի պետական և դպրոցական բաղադրիչներից ունենալ նաև անհատական բաղադրիչ, որը հնարավորություն կտա բավարարել սովորողի նախասիրությունները և կազմակերպել ավելի արդյունավետ ուսուցում:Միջնակարգ դպրոցն ունի ևս մեկ ռազմավարական առանձնահատկություն, դասերի ավարտից հետո սովորողները կարող են կատարել իրենց տրված հանձնարարությունները (ինքնուրույն աշխատանքի ձևով) դպրոցում:

Դպրոցի շենքային պայմաններ

Դպրոցում չկա արհեստանոց, զգացվում է լաբորատորիաների պակաս, փոքր և անհարմար է ռազմագիտության և այլ աշխատասենյակները, վերանորոգման կարիք ունեն դպրոցի սանհանգույցները: Անխնամ է դպրոցամերձ տարածքը, չկա խաղահրապարակ ու մարզահրապարակ:

Վերը նշված բոլոր խնդիրներ մշտապես պահել տեսադաշտում և հետևողական լինել դրանց լուծմանը համագործակցության, տնտեսումների, հովանավորների և ներդրումների արդյունքում:

Անցկացված հարցման բովանդակությունը

Դպրոցում վերանորոգման կարիք ունի …

1. Առարկայական կամ աշխատանքային կաբինետների անհրաժեշտություն…
2. Համագործակցություն այլ կառույցների հետ…
3. Նյութատեղնիկական բազայի համալրման անհրաժեշտություն…
4. Խորհրդակցական մարմինների գործունեություն…
5. Դասասենյակների կահավորանք , գույք, վերանորոգման կարիք..
6. ՏՀՏ միջոցների առկայություն, համակարգիչներ…
7. Դպրոցի բակի, մարզահրապարակի բարեկարգում…
8. Արտադասարանական գործունեության ակտիվացում
9. Ի՞ՆՉ ԵՔ ԱԿՆԿԱԼՈՒՄ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐԻՑ…

Եզրակացություն

Գրեթե ամենուր

1. Խիստ անհրաժեշտէ
2. Անհրաժեշտ է
3. Խիստ կարիք կա
4. Լավ է
5. Կարիք կա
6. Խիստ կարիք կա
7. Անհրաժեշտ է
8. Նպատակահարմար է
9. Լինի ՄԱՐԴ…հարգանք, գնահատի աշխատողներին, վերաբերմունք, առողջ մթնոլորտ դպրոցում, աներկյուղ աշխատանքի ապահովում…

Ընդհանրացնելով անցկացված հարցման արդյունքները՝ պետք է նշել.

Դպրոցն ունի նյութատեխնիկական բազայի համլրվածության կարիք, գույքի թարմացման և նոր սերնդի համկարգիչների խիստ կարիք, համագործակցության և արտադասարանական աշխատանքների կազմակերպման կարիք, բակի բարեկարգման և լաբորատորիաների կարիք և ի վերջո դպրոցի հանրույթը նոր ղեկավարից ակնկալում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ դպրոցում, գնահատված լինելու և հանգիստ աշխատելու հնարավորություն և ցանկանում են, որ իրենց նոր ղեկավարը լինի.

Մեջբերում եմ – ՄԱՐԴ…

Դպրոցի «Կրթության զարգացման ծրագրի» գլխավոր նպատակների և խնդիրների սահմանումը



Ապահովել կրթության որակի բարելավումը:

Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը.

Դպրոցն ունի ուսումնական գործընթացի նպատակներ և խնդիրներ, հնարավորության չափով կիրառում է համապատասխան տեխնոլոգիաներ, դիդակտիկ պարագաներ, ուսուցումը համապատասխանեցնում է աշակերտների կարիքներին, առաջնորդվում է անհրաժեշտ ուսումնական և ուսումնամեթոդական փաստաթղթերով:

Դպրոցի գլխավոր խնդիրը պետք է լինի կրթության որակի բարելավումը , ինչը կապահովի սովորողների, ծնողների և հասարակության վստահությունը դպրոցի և նոր ապագայի հանդեպ:

1. Ուսուցիչների վերապատրաստում և ատեստավորում: Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-իթիվ 1391 –Նորոշման՝ ապահովել ուսուցիչների ատեստավորումը՝ ձգտելով դպրոցում ունենալ տարակարգ ունեցող շատ ուսուցիչներ:
2. Աշխարհաքաղաքական փոփոխություններից և բարեփոխումների ծրագրով հանրակրթությանը ներկայացվող ժամանակակից պահանջներից ելնելով՝ օտար լեզուների խորացված ուսուցում, բանավոր խոսքի զարգացում, տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծում դասապրոցես:
3. Օժտված սովորողների հայտնաբերում և նրանց հետ անհատական ծրագրերով խորացված ուսուցման կազմակերպում:
4. Համակարգված և նպատակային աշխատանք ներառված և թույլ ընդունակու-թյուններ ունեցող աշակերտների հետ:
5. Կարևորել համացանցային, տեղեկատվականէ նախարարության կողմից երաշխավորվող կրթական հարթակներն ու էլեկտրոնային ծրագրերը, որպես աշակերտ, ծնող, ուսուցիչ կապն ապահովող համապարփակ միջավայր: Ապահովել ծրագրերի շարունակականությունը և արդյու-նավետության բարձրացումը:
6. Հարստացնել առկա ուսումնամեթոդական բազան: Ձեռք բերել ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցեր, գեղարվեստական, գիտական գրքեր, ատլասներ, քարտեզներ:
7. Մեծ ուշադրություն դարձնել պրակտիկ ունակությունների զարգացմանը, հմտությունների մշակմանը, սովորողների ֆիզիկական և ռազմահայրե-նասիրական դաստիարակությանը :
8. Լայնորեն կիրառել դասաժամի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ՝ ուսումնադիդակտիկ պարագաներ, սլայդներ, տեսաժապավեններ, պլակատներ, աղյուսակներ, մուլյաժներ, գործիքներ, նյութեր:
9. Գնահատել կամ ախտորոշել հեռավար ուսուցման արդյունքներն ու թերացումները, առաջիկա ամիսներին ստուգել ու գնահատել բացթողումներն ու թերությունները, միջոցներ ձեռնարկել բաց թողածը լրացնելու, այնուհետև աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար:

10. Կազմակերպել ուսուցիչների վերապատրաստումներ ու զանազան տեղեկատվական վեբինարներ հատուկ դրության պայմաններում արդյունավետ աշխատելու և տեղեկատվական գործիքներից օգտվելու համար:

Ապահովել բարենպաստ ուսումնական միջավայր, հարստացնել նյութատեխնիկական բազան:

Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, լաբորատորիաների, լաբորատոր սարքավորումների և ՏՀՏ-ների, բարեկարգ մարզադահլիճի և մարզական համապատասխան գույքի, խաղահրապարակի և բարեկարգ բակի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է, որը լիարժեք կլինի համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայության դեպքում: Սա պայմանավորված է նշված բոլոր կետերի առկայությամբ և փոխկապակցվածությամբ: Դպրոցը կարող է ուժեղ լինի մի ուղղությամբ, բայց այդ ուժը կթուլանա մեկ այլ ուղղության թույլ լինելու պատճառով:

Առկա են հետևյալ խնդիրները.

- Դպրոցն ունի համակարգչային կաբինետ , որտեղ չկան նոր սերնդի համակարգիչներ, ինչը մեր ժամանակներում բավականին լուրջ խնդիր է:
- Դպրոցն ունի լավ քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի ուսուցիչներ, բայց չունի համապատասխան գույքով և սարքավորումներով հագեցած լաբորատորիաներ:

Նշված բոլոր խնդիրներն ունեն լուծման կարիք, ինչը հնարավոր եմ համարում առաջիկա հինգ տարիների ընթացքում.

1. Ակտիվ համագործակցելով մարզային և քաղաքային իշխանությունների հետ:
2. Համագործակցելով տարբերՀԿ-ների հետ և մասնակցություն տարբեր ծրագրերի:
3. Ակտիվ համագործակցելով ծնողական համայնքի հետ, հնարավորության դեպքում կամավորության սկզբունքով օգտագործելով ծնողների ֆիզիկական ներուժը բարեկարգման աշխատանքներին:
4. Խնդիրները փորձել ինչ-որ չափով լուծել նաև տնտեսումների և բյուջեյի ճիշտ պլանավորման հաշվին:
5. Հնարավորության սահմաններում փնտրել և գտնել հովանավորներ և իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն.

Հանրակրթական դպրոցը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում.
2) համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում.
3) ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում.
4) արտադպրոցական դաստիարակության կազմակերպում:

Արտադասարանական գործունեության ակտիվացում

Արտադասարանական աշխատանքները, լինելով դասագործընթացի օրգանական շարունակությունը, նպաստում են սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորմանը, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը: Այդ տեսանկյունից էլ սխալ կլիներ ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը սահմանափակել միայն ուսումնական աշխատանքի շրջանակներում, չէ՞ որ դպրոցականի հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում նրա ամբողջ գործունեության բազմազանտեսակներում: Ուրեմն սովորողների հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում ոչ միայն ուսուցման, այլև արտա-դասարանական աշխատանքների գործընթացում: Քանի որ արտադասարանական աշխատանքի բազմապիսի ձևերի օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու աշակերտների բազմակողմանի զարգացումը ու ճանաչողական հետաքրքրության ձևավորումը:

Արտադասարանական գործունեության բովանդակությունը խիստ կանոնակարգված չլինելով, թույլ է տալիս ավելի օպերատիվ կերպով օգտագործել սովորողների զարգացման համար գիտության, տեխնիկայի, մշակույթի և արվեստի նորագույն նվաճումները: Արտադասարանական աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը կախված է '

- Ուսուցչի մասնագիտական, մեթոդամանկավարժական պատրաստվածությունից ու լավատեսությունից:
- Աշակերտների նկատմամբ բավստահելի վերաբերմունքից:
- Դասարանի կոլեկտիվի գործունեության տարբեր ձևերի զուգակցումից ու կազմակերպումից
- Դպրոցականների աշխատանքի օբյեկտիվ խրախուսումից ու գնահատումից:
- Նրանց անհրաժեշտ օգնություն ցույց տալու մշտական պատրաստվածությունից և այլ հանգամանքներից:

Մանկավարժական համակազմի որակական բարելավում

1. Մանկավարժներին աջակցել՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութեր:
2. Շահագրգռել մանկավարժներին կատարելու հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:

Նպաստել, որ ուսուցիչը ցանկություն ունենա տարակարգի ձեռքբերման, կամավոր ատեստավորման համար: Ստեղծե;շլ բոլոր հնարավոր պայմանները ուսուցչի հարմարավետ ոը արդյունավետ աշխատանքի համար:

Սպասվող արդյունքները

1. Մանկավարժների մասնագիտական որակի մակարդակի բարձրացում:
2. Մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների և բովանդակության համակարգում:
3. Մանկավարժների մեթոդական աշխատանքների պահանջարկի բարձրացում:
4. Մանկավարժների մեթոդական մշակումների մրցունակության ապահովում:
5. Մանկավարժների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում:

Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում

1. Դպրոցի նորմատիվային ամրապնդում դաստիրակության ոլորտում, սովորողների ուսուցման ու զարգացման ապահովում դպրոցի կրթական ծրագրերի և արտադասարանական գործունեության շրջանակներում:
2. Սովորողների իրավունքների պահպանումը պետական կրթական չափանիշներին համապատասխան:
3. Մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովումը:
4. Սովորողներին շահագրգռել հետազոտական աշխատանքներ կատարելու համար, նրանց համար վարչական հետազոտությունների կազմակերպման և իրականացման նպաստավոր պայմանների ստեղծում:

Սպասվող արդյունքները

- Դպրոցի կրթական քաղաքականության նորմատիվային ամրակայում՝ հիմնարար կրթական ծրագրի ձևով:
- Ուսումնական պլանի համակարգված մեթոդական և դիդակտիկ ապահովվածություն:
- Մեթոդական և դիակտիկ նյութերի ընտրության ու մշակումների ուղղությամբ մանկավարժների միասնական մոտեցումների ապահովում:
- Սովորողների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում:

Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործումը

Դպրոցում համապատասխան կրթադաստիարակչական միջավայրի ստեղծումը կնպաստի սովորողների սոցիալականացմանը, նրանց հոգևոր, բարոյական, հայրենասիրական և ֆիզիկական զարգացմանը, արժեհամակարգի ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը:

Հիմնական նպատակները

1. Ապահովել որակյալ կրթություն:

2. Կրթության նորացված բովանդակության մշակում և ներդրում:

3. Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում՝ մանկավարժների մասնագիտական կրթության առանձնահատկություններն ապահովելու և ուսումնական գործընթացն ակտիվացնելու համար:

4. Մասնակցություն տարբեր մրցույթների, ծրագրերի, նախաձեռնությունների:

5. Տարեկան գործունեության վերաբերյալ ամենամյա հանրային հաշվետվություն:

6. Երեխաների առաջադիմության մասին տեղեկատվություն:

7. Բոլոր ուսուցիչների կողմից դասապրոցեսին անհրաժեշտության դեպքում համակարգչի օգտագործման ապահովում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

No	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/գործողության չկատարման կամ մասնակի կատարման/առկայության դեպքում/պատճառ	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկ	Նշումներ
1	Մանկավարժական առաջավոր փորձի ներդրում պրակտիկ աշխատանքում	Դասի ավելի արդյունավետ կազմակերպում	2023-2028թթ				
2	Սկսնակ ուսուցիչների վերապատրաստում, նախապատրաստում ատեստավորման	Ժամանակակից մեթոդների օգտագործում	Տարվա ընթացքում				
3	Համակարգչային ծրագրերի հատուկ դասընթացներ	ՏՀՏ-ների օգտագործումդասի ընթացքում	2023-2026թթ				

	ուսուցիչների համար						
4	Դաստիարակչական աշխատանքներ՝ հիմնված դասղեկական պլանների վրա	Դասապրոցեսի կազմակերպման արդյունավետության բարձրացում	2023-2028թթ				
5	Առանձին աշխատանք վարքի խնդիրունեցող երեխաների հետ	Դասապրոցեսին ավելիհեշտ ինտեգրում	Տարվա ընթացքում				
6	Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում	Մշակութային ինտելեկտի զարգացում	Տարվա ընթացքում				
7	Համագործակցություն մշակութային օջախների հետ	Ավելի խոր և մանրամասն ծանոթություն հեղինակների կյանքի պայմաններին և նրանց ստեղծագործություններին	2023-2028թթ				
8	Ուսումնադաստիարակչականի գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում, ծնողական ժողովներ և հանդիպումներ ուսուցիչների հետ	Ուսուցիչ- ծնող, ծնող-դպրոց կապի ամրապնդում,կրթությանորակի բարձրացում	2023-2028թթ				
9	Ռազմահայրենասիրական ևմշակութային տարբեր միջոցառումների կազմակերպում	Ռազմահայրենասիրությանմակարդակի և ընկալման բարձրացում	2023-2028թթ				
10	Առողջ ապրե-լակերպի և սպորտի զարգացում դպրո-ցում, սպորտային տարբեր միջոցառումների և սպորտլան-դիաների կազմակերպում	Առողջ մարմնում առողջհոգի	2023-2028թթ				
11	<<Թումո>> տուփի բացում	Նոր հնարավորություններ երեխաների համար համագործակցության	2024-2025թթ				
12	Դպրոցի շենքը հնարավորինս	Ավելի հեշտ կհաղթահարեն իրենց կարիքները	2023-2024թթ				

	համաատասխանեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը						
13	Առարկայական կաբինետների հմնում	Պրակտիկ և տեսական	2023-2026թթ				
	նյութատեխնիկական բազայի համալրում, նոր համակարգիչների ձեռքբերում	դասերի համախմբում					
14	Գեղագիտական խմբակների հիմնում	Գեղեցիկի մասին պատկերացումներ ստեղծելու և աշխարհըգեղեցիկ ընկալելու հնարավորություն	2024-2025թթ				
15	Սպորտդահլիճի բարեկարգում, ժամանակակից մարզական գույքի ձեռքբերում	Ավելի հետաքրքիր և բովանդակալից դասի կազմակերպում, սպորտինկատմամբ հետաքրքրության աճ	2023-2025թթ				
16	Ուս - հասատատության կանաչ տարածքների բարեկարգում	Երեխաների մոտ հոգատարության և շրջապատի հանդեպ հետաքրքրասիրությա ն ավելացում	2023-2028թթ				
17	Հոգեբանների և ուսուցչի օգնականների արդյունավետ աշխատանքի ապահովում	Ներգրավվածության աստիճանի բարձրացում	2023-2028թթ				
18	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի անցում էլեկտրոնային փաթեթի	Դպրոցի գործունեության հասանելիություն առցանցհարթակում	2023-2028թթ				
19	Դպրոցի հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հանդիպումներ, քննարկումներ	Դպրոցի հեռանկարային ծրագրերի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հնարավորություն	Տարվա ընթացքում				

20	Կառավարման խորհրդի դերի բարձրացում	Առավել մասնակից դարձնել դպրոցի գործունեությանը	Տարվա ընթացքում				
21	Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ	Ավելի բարեկարգ միջավայր ստեղծելու համար	2023-2028թթ				
22	Տիպային նոր մասնաշենքի կառուցում, դիմելով զանազան կառույցների	Ունենալ տիպային դպրոց, որը կրթության որակը կհանգեցնի նոր որակի և դպրոցը կազատի բազմաթիվ խնդիրներից	2023-2028թթ				
23	Տարրական դպրոցի շենքային համարժեք պայմանների ստեղծում	Տարրական դասարանները դպրոցի հիմքն են, և ակնկալում ենք առավել արդյունավետ գիտելիքների յուրացում	2023-2028թթ				
24	տարածքների նպատակային օգտագործում	Ավելի բարեկարգ և սենյակների նպատակային օգտագործում	2023-2026թթ				
25	սանհանգույցների վերանորոգում,դասասենյակների հին պատուհանների փոխարինում նորով	Ավելի բարեկարգ և տաք դասասենյակներում դասապրոցեսի կազմակերպում	2023-2025թթ				

26	Դպրոցում ունենալ բուֆետ	Ուսուցիչները և աշակերտները կսնվեն դպրոցում	2023-2024թթ				
27	Ճաշարանի սեղան-աթոռների փոխարինում նորով	Միջավայրի և պայմանների բարելավում	2023-2025թթ				
28	Դպրոցի բակի բարեկարգում և ասֆալտապատում	Գեղագիտական ճաշակի բարձրացում	2023-2028թթ				
29	Մեթոդկաբինետների, հանդիսությունների դահլիճի,հանդերձարաններիհիմնում	Հարմարավետ պայմաններստեղծել աշխատողների համար	2023-2025թթ				
30	Գրատախտակների փոխարինումորակյալ նորով կամ էլեկտրոնայինով	Ուսման գործընթացը ավելի արդյունավետ դարձնել	2023-2028թթ				
31	Մարզադաշտի հիմնում, կանաչապատում	Ավելի մաքուր ու հարմարավետ լինելու նպատակով	2023-2025թթ				

Պատասխանատուները

Դպրոցի զարգացման ծրագրի պատասխանատուներն են տնօրենը, վարչատնտեսական համակարգողը, փոխտնօրենները, մեթոդմիավորման նախագահները, ուսուցիչները, դասղեկները, լաբորատորիայի վարիչը, գրադարանի վարիչը, տնտեսվարը, որոնց ճիշտ և փոխհամագործակցված աշխատանքի արդյունքում դպրոցը կունենա ցանկալի և տեսանելի արդյունք: Օղակները պետք է աշխատեն համաձայնեցված՝ լրացնելով միմյանց: Միայն այդ ժամանակ աշխատանքը տեսանելի կլինի և ժամանակային առումով իրատեսական: Անհրաժեշտության դեպքում հաստատության գործունեության մեջ կատարվող և հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող փոփոխությունների հետևանքով կարող են փոխվել նաև պատասխանատուները: 2023թ-ից դպրոց է ներդրվում

վարչատնտեսական համակարգողի ինստիտուտը, որը հնարավորություն կտա տնօրենին իր ամբողջ ժամանակն ու հնարավորությունները ներդրի միայն կրթության գործի կազմակերպման համար: Այս ամենի կշահի կրթության որակը: Տնօրենի և վարչատնտեսական համակարգողի հաջող համագործակցության արդյունքում դպրոցը միայն կշահի:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմախնդիրների լուծման եղանակը դպրոցի զարգացման ծրագրի միջուկն է, այն գաղափարն է բովանդակության որոշման համար: Որպես կանոն, եղանակները կարող են լինել մի քանիսը:Կարևոր է ընտրել խնդրի լուծման ռացիոնալ /օպտիմալ/ տարբերակը:

Նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ռազմավարական ծրագիր, առաջ քաշել հիմնախնդիրներ, որոնք հնարավորություն կտան համեմատաբար փոքր ներդրումներով տալ առավելագույն արդյունք և նպատակաուղղված ձևով հասնել դպրոցի առաքելության իրականացմանը:Դպրոցներն այսօր ֆինանսավորվում են աշակերտների թվով, և դպրոցի բյուջետային միջոցները բավարարում են, եթե աշակերտների թիվը դասարանում բարձր է միջինից: Եթե այդ միջոցներն անբավարար են, ապա դպրոցը բյուջետային միջոցների հետ կապված իր խնդիրները փորձում է լուծել՝ որոշ ուղղություններում քիչ ներդրումներ կատարելով:

Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները.

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
- Եկամտահարկի վճարներ

(Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում, որպես կանոն, չեն փոփոխվում)

- Գրասենյակային և տնտեսական ծախսեր
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր

(Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են)

- Կապի ծառայությունների ծախսեր
- Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր
- Ջրմուղ-կոյուղու ծառայությունների գծով ծախսեր
- Կոմունալ ծառայությունների վճարներ

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են խնայողությունների հաշվին:

Հաճախ բյուջետային միջոցների սղություն առաջանում է բյուջեի սխալ պլանավորման պատճառով: Պահանջվող չափից ավելի քիչ միջոցներ նախատեսելով՝ «Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ» կամ «Եկամտահարկի» ծախսային ուղղություններով՝ դպրոցն ունենում է ֆինանսական միջոցների «կեղծ» ավելցուկ, որն այլ հոդվածներում ծախսելուց հետո տարվա վերջում հանգեցնում է խնդիրների:

Սխալ պլանավորման պատճառ կարողէ հանդիսանալ օրինակ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում ուսումնական պլանի և աշակերտ-թվով ֆինանսավորման վերահաշվարկով կատարվող փոփոխությունների սխալ կանխատեսումը:

Անհրաժեշտ եմ համարում .

- Զարգացնել դպրոցի տնօրենի և վարչատնտեսական համակարգողի կարողությունները՝ դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները կանխատեսելու, նախահաշիվ կազմելու, ֆինանսական միջոցները , հաշվետվություններ կազմելու համար:
- Դպրոցի բյուջեի կազմման և ֆինանսական գործունեությանը նպաստելու համար ստեղծել դպրոցի բյուջեն պլանավորելու և դրա մեջ փոփոխություններ կատարելու հանձնաժողով:

Դպրոցն ունի նաև պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում ստանալու իրավունք հետևյալ նպատակներով.

- ✓ Իրականացնել հատուկ կամ լրացուցիչ կրթական ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար
- ✓ Իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ և(կամ) այլընտրանքային ծրագիր,

✓ Կազմակերպել դպրոցականների միջազգային օլիմպիադաների նախապատրաստական հավաքներ և դասընթացներ

✓ Ստեղծել ուսումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր (այդ թվում՝ էլեկտրոնային):

Ուսումնական հաստատությունը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկությամբ ստանալ լրացուցիչ ֆինանսավորում նաև այլ նպատակներով: ՀՀ կառավարության՝ 25 հուլիսի 2002 թվականի N 1392-Նորոշմամբ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպություններին թույլատրվել է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- Լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում
- Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում
- Համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում
- Սովորողների սննդի կազմակերպում
- Ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում:

Բարեգործության և նվիրատվության հաշվին գոյացած միջոցները ևս դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման տեսակներից կարելի է համարել , որը իհարկե կանխատեսելիության որոշ պակասունի, սակայն, ի տարբերություն պետական միջոցների, դրանք ավելի ճկունեն, քանի որ դրանց օգտագործման ուղղությունների վերաբերյալ որոշումները կայացվում են դպրոցներում, ուստի դրանք կարող են ուղղվել դպրոցի առավել խիստ կարիքներին: Կանխատեսելության առումով առավել հստակ են դպրոցի կողմից խնայված գումարների հաշվին գոյացած միջոցները, որը նույնպես կարելի է օգտագործել դպրոցի համար առավել առաջնային խնդիրներ լուծելու համար:

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրներիլուծման գործողություններ	Պատասխանատուներ	Կատարման ժամանակացույց
Ավագ դպրոց հաճախող սովորողների թվի պակասում	Դպրոցը համալրել այնպիսի մանկավարժներով, ովքեր իրենց փորձով օրինակ կլինեն երիտա-սարդ մանկավարժների համար, և սովորողներն էլ չեն ցանկանա իրենց կրթությունը շարունակել քոլեջներում և վարժարաններում:	Տնօրեն Տնօրենի ուս. գծով տեղակալ Մանկավարժներ	2023-2028թթ
Մանկավարժական համակազմի գործունեության բարելավում և կատարելագործում	1. Ուսուցիչներին ծանոթացնել նոր ՀՊՉ-ի փոփոխություններին և դրանից բխող ծրագրային, առարկայական չափորոշիչներին և մեթոդաբանությանը	Տնօրեն Տնօրենիուս. գծով տեղակալ	2023-2025թթ
	2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատանքի և անհատական ուսուցման պլանների կազմման մեթոդաբանության կիրառման և հմտությունների ձեռքբերման աշխատանքներ		2023-2028թթ
Հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդների բացակայություն	Ծնողների և համայնքի օգնությամբ հնարավորության դեպքում ստեղծել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդներ	Տնօրեն Շրջանավարտներ Ծնողներ Համայնքի ներկայացուցիչներ	2024-2025թթ
Խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի դերի բարձրացում	Ակտիվացնել համագործակցությունը խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի միջև	Տնօրեն Կառավարման խորհուրդ Խորհրդակցական մարմիններ	2023-2028թթ
Նյութատեխնիկական բազայի հարստացում	1. Ձեռք բերել նոր սերնդի համակարգիչներ և պրոյեկտորներ, լինգաֆոնային դասասենյակի համար գույք և տեխնիկա 2. Լաբորատորիաների համար ձեռք բերել փորձերի համար անհրաժեշտ նյութեր	Տնօրեն Համակարգող	2023-2028թթ

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացումը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Դպրոցի զարգացման ծրագրում հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է, քանի որ, առանց ռիսկերի հաշվառման ամենալավ մշակված զարգացման ծրագիրն անգամ դժվար է իրականացնել և հասնել ցանկալի արդյունքի:

N	Ռիսկեր	Ռիսկերի նվազեցմանը ուղղված գործողություններ
1	Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատ-րաստվածության մակար-դակի խոչընդոտներ:	Մանկավարժներին ընդգրկել վերապատրաստման դասընթացներին մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:
2	Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ:	Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքբերում, գտնել հովանավորներ, բարերարներ, ծավալել ակտիվ համագործակցություն տարբեր կառույցների հետ:
3	Դպրոցի նյութատեխնիկա-կան բազայի ոչ բավարար հագեցվածություն:	Ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում,լրացուցիչ միջոցների հայթայթում, ծրագրերի մասնակցություն:
4	Խորհրդակցական մար-մինների պասիվություն:	Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների, աշակերտների հետ, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար և այլ հարցեր:
5	Դպրոցի շենքի մասնակի վերանորոգման կարիք:	Դիմել համապատասխան մարմիններին ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակով: Գտնել հովանավորներ և ներդրումներ, կամավորության սկզբունքով օգտագործել ծնողական

		համայնքի ֆիզիկական ներուժը:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

<<Հանրակրթության մասին>> օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գոծունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

Հասկանալի է, որ դպրոցի զարգացման ծրագիրը դպրոցի 5-ամյա հեռանկարային զարգացման ծրագիր է, և որքան էլ այն տեղ պլանավորված նպատակները, խնդիրները և գործողությունները ճշգրտորեն ներկայացված լինեն, ժամանակի ընթացքում, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված,

որոշակիորեն ենթարկվում են փոփոխությունների և սրբագրումների: Դպրոցի խորհրդի կողմից դպրոցի զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության գործընթացը ոչ թե նպատակ ունի իրացնելու դպրոցի կառավարման այդ մարմնի ֆորմալ իրավունքը, այլ իրականում դպրոցի խորհուրդը իր խորհրդատվական աջակցությամբ, դպրոցի ֆինանսական ռեսուրսների ճիշտ ուղղորդմամբ և այլ աշխատանքներով պետք է աջակցի տնօրենին դպրոցի զարգացման ծրագրի իրականացման փուլում իր իսկ կողմից սահմանած նպատակադրումներում: Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա այդ ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դրա համար անհրաժեշտ է դպրոցի զարգացման ծրագրի նպատակադրումները ամբողջությամբ արտացոլել դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ դպրոցի զարգացման ծրագրով սահմանվածժամանակացույցինհամ ապատասխան: Դպրոցի զարգացման ծրագրի վերհսկողության արդյունավետ միջոցառումներեն.

- Դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը:
- Դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը:
- Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը:
- Դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը:

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության օրենքը կարգավորող օրենսդրության համաձայն:

Զարգացման ծրագիրը մշակելիս հիմք են ընդունվում դպրոցի կրթական, ֆինանսական, տնտեսական և այլ ցուցանիշներ: Այն, լինելով հնգամյա հեռանկարային ծրագիր, որքան էլ ճիշտ պլանավորված լինի և որքան էլ ճշգրտորեն հաշվարկված լինեն խնդիրներն ու գործողությունները, ժամանակի ընթացքում, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, հնարավոր է ենթարկվի որոշակի փոփոխությունների և սրբագրումների: Այդ պատճառով վերահսկման ամենաարդյունավետ միջոցներից մեկը չափելի հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլաններիկատարողականներն են:

Դրա համար անհրաժեշտ է.

1. դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընգրկված Զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրում,
2. դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվության և այլ աջակցության տրամադրում,
3. համայնքի և դպրոցի մյուս շահառուների ծրագրի իրականացմանն այլ միջոցառումների շարունակական ներգրավում,
1. դպրոցի խորհրդի մասնակցություն տնօրենության կողմից Զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը:

Հավատացած եմ, որ դպրոցի այն տեսլականը, որ ես ունեմ, կնպաստի հայկական հզոր և իրավական պետության կայացմանը, լիիրավ ու արժանապատիվ քաղաքացու ձևավորմանը:

Ծրագրի անցումային փուլերը

1-ին փուլ /2023-2024թթ./ - հետազոտական-վերլուծական

Հետազոտական և վերլուծական աշխատանքների կազմակերպում, դպրոցի զարգացման ծրագրի հաստատում:

- Սովորողների նախասիրությունների, ընդունակությունների, կարողությունների և հակումների, նրանց ծնողների պահանջների հետազոտում՝ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման և ծրագրի իրականացման նպատակով:
- Մանկավարժական կազմակերպչական աշխատանքների քննարկում և հետագա անելիքների մշակում:
- Սովորողների հոգեբանական, ֆիզիկական և ինտելեկտուալ զարգացման մոնիթորինգ կրթության բոլոր աստիճաններում:
- Համագործակցության ձևավորում տարբեր կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ:
- Արտադասարանական գործունեության ակտիվացում:
- հետազոտականաշխատանքներիվերլուծություն, կարիքիգնահատում:

2-րդ փուլ /2024-2025թթ/ - փորձարարական- ներդրումային

Կրթության որակի բարելավում, դպրոցի նյութատեխնիկական բազային հարստացում, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ինտեգրումդասապրոցես, համագործակցությունների ընդլայնում:

- Առաջավոր մասնագետների փորձի փոխանակում և ուսուցիչների վերապատրաստում և ատեստավորում:
- Երիտասարդ ուսուցիչների համար սեմինար և ուսուցողական դասընթացների կազմակերպում:

- Կրթության պետական լիազորված մարմնի երաշխավորված դասագրքերի օգտագործում և ընտրություն:
- ՏՀՏ-ի օգտագործում ուսումնադաստիարակչական գործընթացում, միջառարկայական կապի իրականացում ՏՀՏ-ի միջոցով, կրթության մատչելիության ապահովում, սովորողների հետազոտական-ստեղծագործական հմտությունների զարգացում:
- Համագործակցության ձևավորում Ֆրանսիական դեսպանատան և Ֆրանսիայում հայ համայնքի հետ:
- Բանավեճի ակումբի ստեղծում դպրոցում՝ համագործակցելով Ջինիշյան հիշատակի հիմնադրամի հետ:

3-րդ փուլ /2026-2027թթ/ - վերստուգումներ, շտկումներ

"Կրթության զարգացման ծրագրի" իրականացման արդյունքների ուսումնասիրում, շտկումներ:

<u>Նպատակի իրականացման միջոցները.</u>
- Ծրագրի իրականացման հետևողականություն և վերահսկողություն:
- Ծրագրի գնահատման չափանիշների մշակում:
- Ստացված արդյունքների վերլուծություն, գնահատում:
- Եզրակացություն, շտկումների պլանավորում:

<u>Արդյունք.</u>

2. Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներով հնարավորինս հագեցած միջավայր:
3. Կրթության մակարդակի որակական փոփոխություններ , նյութատեղնիկական բազայի հարստացում, ուսումնական միջավայրի բարելավում, ակտիվ համագործակցություն:
4. Կրթական գործընթացի բովանդակային զարգացում:

4-րդ փուլ /2027-2028թթ./ - ծրագրի լիարժեք իրականացում

Ծրագրի իրականացման արդյունքների ամփոփում, աշխատանքային փորձի տարածում, դպրոցի զարգացման նոր ռազմավարական պլանի մշակում:

Նպատակի իրականացման միջոցները.

- Ծրագրի փուլային արդյունքների ամփոփում, քննարկում, գնահատում:
- Ծրագրի իրականացման արդյունքների շնորհանդես, մասսայականացում:

Իսկ այս ամենին հասնելու ճանապարհին անհրաժեշտ է սերտորեն համագործակցել

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Հիմնել աշակերտակենտրոն դպրոց, որի հիմնական նպատակն է նոր դպրոցի հենքի վրա կառուցել ինքնուրույն, նպատակասլաց, առաջադեմ աշակերտի մոդել, ով ավարտելուն համընթաց կունենա հստակ պատկերացում մասնագիտական կողմնորոշման մասին, ում մոտ ձևավորված կլինի արժեքային համակարգը և գիտելիքների հզոր պաշարով ոտքը կդնի իր ընտրած մասնագիտության ճանապարհին:

Դպրոցը հանրույթի,կառավարման մասնակից խորհուրդների, աշակերտական և ծնողական համայնքների հետ համատեղ դարձնել քաղաքի՝ ինչու չէ նաև Հայաստանի Հանրապետության, լավագույն դպրոցներից մեկը…

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում են հետևյալ աշխատանքները